ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ե/1

19 ապրիլի 2025 թվական

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:

Բացակա էին՝ Սարիկ Մինասյանը, Վահագն Մկրտչյանը, Էմմա Բարսեղյանը, Լեվոն Անանյանը, Շավարշ Արամյանը, Քնարիկ Հարությունյանը,Հովհաննես Մանուկյանը, Էդգար Բաղդասարյանը, Գալյա Հայրապետյանը, Անդրանիկ Հակոբյանը, Նարեկ Բեգզադյանը, Աստղիկ Բեյբուտյանը, Վահան Դավթյանը, Լուսինե Նազարյանը,Կարեն Գրիգորյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը,Հայաստանում ՌԴ դեսպանության Գյումրու հյուպատոս Իգոր Տիտովը, ԶԼՄ ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ, հյուրեր, համայնքի բնակիչներ, Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետեր և աշխատակիցներ:

Նիստը վարում էր ավագանու տարիքով ավագ անդամ՝ Վարդան Ղուկասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Արմենուհի Չախոյանը:

Երդմնակալության նիստն հայտարարվեց բացված, քանի որ նիստին գրանցվել են ավագանու 18 անդամներ և նիստն իրավազոր է:
Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը կարդաց Տերունական աղոթքը: Հնչեց ՀՀ օրհներգը:

Համայնքի ղեկավարը, աջ ձեռքը դնելով ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի վրա, ընթերցեց երդման տեքստը և ստորագրեց դրա տակ:
Ստորագրված երդման տեքստը ի պահ հանձնվեց Գյումրի համայնքի ««Կումայրի արգելոց» պատմամշակութային թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրեն Ինգա Ավագյանին:
Գյումրի համայնքի նորընտիր ղեկավարին և ավագանուն իր օրհնության խոսքն է ուղղում Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը:
Ելույթ է ունենում Վարդան Ղուկասյանը:
Շնորհավորական խոսքով հանդես են գալիս ՌԴ հյուպատոս Իգոր Տիտովը, ԱԺ նախկին պատգամավոր Սուքիաս Ավետիսյանը, ավագանու խմբա
Համաձայն Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 116-րդ կետի Գյումրի համայնքի ավագանու անդամներ Ա.Առաքելանը և Լ.Անանյանը համայնքի նորընտիր ղեկավարին հանձնեցին Գյումրի համայնքի խորհրդանիշեր հանդիսացող լանջաշղթան և բանալին:
Հնչեց Գյումրու օրհներգը և Վ.Ղուկասյանը նիստը հայտարարեց փակված:

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ավագանու անդամներ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Լ. ԱՆԱՆՅԱՆ

Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ

Ս. ԱԴԱՄՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կ. ԲԱԴԱԼՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի
2025թ. ապրիլի 19